

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բայց է առաւօտեան 10—2 ժամ
(բայցի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լուրով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1894 ԹԻՒԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՒԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է:

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 ռ., տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսականը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻ:

Օտարաբաղադրացի պէտք է գիմեն հետեւալ հասցեով՝ Тифлиς. Редакция «Мшакъ», իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկրագործութեան միջնորդութիւնը.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կենդանի գործ. Նամակ Բագրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առաւ-րո-Ունեգործ. Անգլիա. Արտաքին լուրեր.—ԽԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԿԻՄՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՄԱԿԱՆ. Անտարկտիկ:

ՆԵՐԿԱՅԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Մի այնպիսի երկրում, ինչպէս Ռուսաս-տանն է և մասնաւորապէս Կովկասը, ուր ժողովրդի մեծամասնութիւնը զբաղված է երկրագործութեամբ, որի միջոցով հայ-թայեմում է նա իր ապրուստը զգաց-վում է մեծ կարեւորութիւն այնպիսի հաս-տատութիւնների, որոնք կոչված են նպաս-տել այդ պարագայում առաջադիմութեանը և զարգացմանը:

Վաղ ժամանակներում, երբ հողի քանա-կութիւնը մեծ էր, երբ ժողովուրդն ըն-դարձակ պահանջներ չունէր, երբ ինքը

ԲԱՆԱՍԻՄԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

Այլ ևս խոշորացող հարկաւորութիւն չը կայ մեր խաւարամիտների գաղտնի խորհուրդները տեսնելու համար:

Նրանք այս օրերս բացարձակ յայտարարեցին, որ պէտք է սահման դնել, պէտք է ցէնը որոշել, որպէս զի տեղից վերադառնող իրաւունք չունենայ մասնակցելու ընտրութիւններին: Եթէ մեր Հա-յաստանայց եղբայրները աւելի քաջութիւն ու-նենային, նրանք կը գրէին ուղղակի այսպէս.— ընտրութիւններին միայն ընտրելու և ընտրվելու պէտք է մասնակցեն. հեռու տարեք, հեռու ժողովուրդը: Հիմարիտ, այնքան տարօրինակ, այնքան անա-պաստելի է այդ միտքը, որ մարդ զփուլարանում է առաջին անգամից հաւատալ, թէ մարդիկ կարող են այդ աստիճան ինքնամոռացութեան հասնել, այդ աստիճան սարսափահար լինել:

Վերջին տարիների ոգեւորութիւնը և եռանդը, որով մեր ժողովուրդը ոչ միայն թիֆլիսում, այլ և գաւառներում սկսել է մասնակցել եկեղեցա-կան ընտրութիւններին, ամենից աւելի պէտք է ուրախացնէր մեր խաւարամիտներին, որոնք օրը հարկւր անգամ, ճշմարտի համեստութեամբ ար-տասանում են Հայաստանայց առաքելական ե-կեղեցիք բառերը, որոնք ամբողջ քսան տարի, հանգուցեալ «Միջուկ» մեռած էջերում, կոկորդի-լոսի արտասուքներ էին թափում, թէ մեր ժող-վուրդը ստուշ է եկեղեցուց, թէ եկեղեցին դա-

պետութիւնը պետական մեծ ծախքեր չէր պահանջում, երբ բացակայ էին հաղորդակ-ցութեան յարմարաւոր ձանապարհներ, նա-հապետական երկրագործութիւնը լաւ թէ վատ ապահովում էր ժողովրդին և փոփո-խութիւնների անհրաժեշտութիւնը չէր զգուժ:

Բայց հանգամանքները զգալի կերպով փոխվեցին և շարունակում են փոխվել: Աւանդական տնտեսութիւնը անկարող հան-դիսացաւ բաւականութիւն տալու ժողովր-դական մեծացած պէտքերին: Ժողովուրդը բաղմանք է, ընդարձակել է իր պահանջնե-րը, պետութեան աճող կարիքների համար պէտք է տայ աւելի հարկեր, սկսել է շրջի-վել հեռաւոր վաճառանոցների հետ՝ դիւ-րացած հաղորդակցութեան ձանապարհ-ների շնորհիւ և սակայն հողը մնում է նոյնը, այն էլ երկարատեւ մշակութիւնից ուժասպառ եղած, անկարող բաւականու-թիւն տալու նոյն իսկ նախկին նահապե-տական կեանքի պիտոյքներին:

Եթէ առաջ միայն ցանկալի էր, որ երկրագործութիւնը ունենար մի հսկող պահպանող, մի հովանաւորող և խրախու-սող տեսչութիւն, այժմ դա անհրաժեշտ էր ուժի իւրին է, դա կենսական մի խիստ, ան-յետաձգելի պահանջ է: Այժմ այլ ևս բա-ւական չէ միայն հովանաւորել և պահպա-նել եղածը, այժմ պահանջվում է փո-փոխութիւններ, առաջադիմութիւններ մտ-ցնել, այժմ պահանջվում է հզղեակաւոր նախաձեռնութիւն ցոյց տալ՝ հարկելու այն ուղիները, որոնցով պէտք է առաջ ընթանայ երկրի անտեսութիւնը:

Երկրագործութեան միջնորդութիւնը.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հետեւեալ է այդ պա-հանջներին: Երկրագործութեան միջնորդ-ութիւնը, իբրեւ վերահսկող և նախաձեռնող հաստատութիւն, պէտք է իր մէջ ամփոփի երկրագործութեան վերաբերեալ բոլոր գոր-ծերը, որոնք զանազան հանգամանքներին շնորհով մինչև այժմ գտնվում էին ներքին գործերի և ֆինանսների միջնորդութիւննե-րի ձեռքում: Օրինակ, մարդիկ ջնջելու, դաշտա-

յին միջին կոտորելու գործը և վերատեսչու-թիւնը պատկանում էին ներքին գործերի միջնորդութեան, թէև դրանք շոշափում էին երկրագործութեան ամենամօտ շահերը և միշտ քննութեան նիւթ են եղել գիւղատն-տեսական հաստատութիւնների մէջ:

Երկրագործութեան միջնորդութեան ծը-րագիրը այժմ պատրաստ է և պետական խորհրդի քննարկի վրա է դրված, ուր նա քննվում է վերջնականապէս:

Մինչև այժմ այն գործերը, որոնք վերա-բերում էին երկրագործութեան, գտնվում էին կայունների միջնորդութեան երկրա-գործական բաժնում: Բայց սա մի սահմա-նափակ հաստատութիւն էր, որ չէր կարո-ղանում զգալի կերպով նպաստել գիւղա-տնտեսութեան զարգացմանը, չունենալով համապատասխան կազմակերպութիւն և մեծ միջոցներ իր ձեռքին:

Կրթական միջոցների խնդիրը այնպիսի մի հաստատութեան ձեռքին, ինչպէս է գիւղատնտեսական ղեկավարող հիմնարու-թիւնը, շատ մեծ կարեւորութիւն ունի: Նոյն իսկ այսուհետեւ, երբ միջնորդութիւ-նը ամբողջապէս պէտք է նուիրված լի-նի ծառայելու երկրագործութեան նպա-տակներին, նա ստիպւած պէտք է լինի առաջին քայլերում իսկ գործ ունենալ դրամական խնդիրների հետ՝ որովհետեւ միջնորդութեան ամեն մի զիտաւորու-թիւն իրագործելու համար ծախքեր են պահանջվում: Ինչի դա դարձել է փորձական կայարան, շարժական թան-գարան, թէ ցուցահանդէս, և թէ շրջիկ դա-սախոս—բոլորը ծախքեր են պահանջելու, որոնց համար, սակայն, միջոցներ չունի նոր հաստատվող միջնորդութիւնը:

Երկրագործութեան միջնորդութիւնն ան-կարող կը լինի արդիւնաւէտ կերպով գոր-ծել, եթէ նա չունենայ երկրի զանազան մասերում իր գործը մարմինները, իր օրգանները, եթէ երկրագործական կեանքի և միջնորդութեան մէջ կրճատված չը լինի յարաբերութիւնները շրջի-կայարանի հետ:

Թող չը տալ, որ ամենքը մասնակցին ընտրու-թիւններին...

Միթէ...

Բայց արդեօք նոյնքան հեշտ է այդ խօսքերի իրագործումը, որքան հեշտ է եղել նրանց խմբ-գրելը և հրատարակել հանելը.—ահա հարցը: Իրանք խմբագրողներն էլ գիտեն, որ շատ դժուար է, բայց ինչ արած, ПОИТЕРА НЕ ИМЕТРА:

Երկու տարի է մեր խաւարամիտները ամեն տեսակ միջոցների դիմում էին, որ այս օրին չը հասնեն, բայց չհղաւ: Եւ այսօր, անկեղծ սրտով խաւարամիտներն են, նրանք գիտում են այս միջո-ցին միայն այն պատճառով, որ ուրիշ ելք չեն գտնում:

Մի քանի տարի առաջ, երբ մեր խաւարամիտ-ներն, վերաւորված մեր հասարակական հիմ-նարկութիւնների ընկած վիճակից, դուրս փոխեց «ազգային գործերի կապաւորուածներին» Բարեգոր-ծական, Հրատարակչական ընկերութիւններից, և այլ տեղերից, խաւարամիտների պարագլուխներից միմե, եղբայրացեալ տեսլ էր իր հակառակորդ — ծանօթին. «Եկեղեցութիւնները մտաք, ձեր ձեռքը դեցեք, բայց եկեղեցին մերն է, և միշտ մերը կը մնայ, այնուհը դուք կը ջարդվեք»:

Փոքր ժամանակ անցած՝ 1892 թ.ին, Թիֆլիսի թիւի կաթողիկոսական պատգամաւորի ընտրու-թիւնը վրա հասաւ: Գրիգոր Արծրունին զրեց իր աւուր: Նոյն եղբայրացեալ պատգամաւոր իր հա-կառակորդ—ծանօթին, Հռօմի պապի վստահու-թեամբ առում է. «Խորհուրդ տուցեք պ. Արծրու-նուն, որ իր աւուրը չը դնի, եկեղեցում մնաւ ան-յաղթելի ենք»: Եւ ահա, օ՜ սարսափ, Արծրու-նին, որ համարվում էր եկեղեցու թշնամի և քան-

թան: Կաւառական այս գործադիր մար-մինների խնդիրը շատ մեծ խնդիր է, որի աջող լուծումից կախված է և միջնորդու-թեան գործունէութեան աջողութիւնը: Մի կողմից երկրագործ մարդու պա-հանջների ձայնը, նրա կարծիքները, նրա նախաձեռնութեան փորձերը, միւս կողմից միջնորդութեան ղեկավարող միջամտութիւ-նը, ծրագրերն իրագործելու անհրաժեշ-տութիւնը պէտք է հիմք ծառայեն յարաբե-րութիւնների կազմակերպութեան համար: Սրանք ծանրակշիւ խնդիրներ են, որոնք այժմ զբաղեցնում են թէ պետական ան-ձանց և թէ գիւղատնտեսներին: Ցանկալի է, որ և մեր Կրեւտնտեսական ընկերու-թիւնը նուիրէր մի երկու նիստ գործադիր մարմինների քննութեան խնդրին և այսպի-սով օգնէր իր կողմից խնդրի պարզելուն:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵՆՏՐԱՆԻ ԳՈՐԾ

Մեր երկրի զարգացման և բաղադրակրթութեան գործում աչքի է ընկնում մի խոշոր երևոյթ, այդ այն է, որ կուլտուրան համահաւասար կեր-պով չէ տարածվում ժողովրդի մէջ, նա մնում է փոքրամասնութեան սեփականութիւն, նրա բա-րիքները վայելում են միայն ժողովրդի բարձր խաւերը և դրա համար ընդհանուր կուլտուրայի մակերեւոյթը մեր մէջ շատ ստոր է:

Եթէ «մեր կուլտուրա» խօսքով հասկանում ենք մի սակաւթիւ հասարակութիւն մի քանի բաղադրների և ոչ երկրի ամբողջ ազգաբնակչու-թեան կուլտուրան, այն ժամանակ դուք է կարելի լինելու ասել: Թէ կուլտուրան պատռաստվում է մեր մէջ: Բայց չէ որ կուլտուրա ասելով պէտք է հասկանալ մի ամբողջ ժողովրդի, ազգի, ամբողջ երկրի կուլտուրան և ահա այդ կուլտուրայի մա-սին է մեր խօսքը:

Նոյն իսկ բարձր խաւերի, քաղաքների կամ փոքրամասնութեան կուլտուրական նուաճումները

դուր, ընտրվեց նոյն իսկ այդ եկեղեցում:

Հայաստանայց եղբայրները սարսափահար ե-ղան.—պէտք է պատրաստվել, պէտք է մի ան-գամ ընդ միշտ ջարդել նրանց այդ ասպարեզում, —մտածեցին նրանք, և իրանց ամբողջ ոյժով, իրանց բոլոր պարագայութիւններով, թէ հետե-ւակ, թէ հեծնալար, և թէ պահեստի գն-դելով մասնակցեցին յայտնի մեծ ընտրու-թեան, այն է 1894 թ.ին, Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան: Եւ լաւ յիշում եմ, թէ ինչ իրաւանցում, ինչ պարագայութիւններ, ինչ ազմուշ կար այն ժամանակ խաւարամիտների բանակում.—Գա Վրինկ թէ չը լինելու՝ կուլ էր: Քաջաբար կուլեցին—բայց էլ ջարդվեցին...

Գրանից յետոյ մի քանի փորձեր եղան.—կըր-կին պարտութիւն, և այդ էլ միայն Թիֆլիսում, այլ և Երևան, և Երզնի, և ուրիշ տեղեր: Այստեղ, Թիֆլիսում սեանում են միմե միմեի յետեւից խաւարամիտների սիւնները, իսկ դրանից յետոյ Երևանում՝ սեանում են դրանց բոլորի բարեկամ-ները, և այնպէս փառաւոր կերպով, որ կարծեք, նախախնամութիւնը բարկացել է դրանց բոլորի վրա...

Եւ այդ բոլորից յետոյ, ասեցեք խնդրեմ, ինչ-պէս չը յաղկւին, ինչպէս չը վրդովվին այն մար-դիկ, որոնք իրանց համարում էին թէ դրականու-թեան և թէ կեանքի մէջ՝ պաշտպաններ Հայաս-տանայց եկեղեցու, նրա հարազատ որդի, անձ-նուէր գիւղերին:

Կրկնում եմ, ինչպէս չը վրդովվին, և ինչպէս չը հասնեն այն վերջնական եղբայրացութեան, որին այսօր նրանք հասան.—այն է, որ պէտք է սահման դնել և ընտրել աւելի բարձր միայն թող տալ ընտրութիւններին մասնակցելու:

կրում են լուսաւորութեան լոկ երևոյթը և մենք շատ լաւ գիտենք, որ այդ կուտուրան իր էութեան մէջ դեռ պարունակում է ասիականութեան և վայրենի սովորութիւնների բոլոր ինստինկտները. մենք շատ լաւ գիտենք, որ եւրոպականութեան տարազի տակ դեռ պահպանւած է ասիացու հաստ կաշին, բայց դարձեալ լուսաւորութեան այդ արտաքին փայլի և հասարակ ժողովրդի կուտուրայի մէջ մեծ վիճ կայ: Այն հակասութիւնը, որ տիրում է փոքրամասնութեան ունեցած կուտուրայի, չափաւորութեան ու ճոխութեան՝ և մեծամասնութեան ունեցած փոքր ի շատէ մարդկային կեանքի ամենատարրական պայմանների բացակայութեան մէջ, ցոյց է տալիս արդէն, թէ որքան ստոր է մեր ընդհանուր կուտուրայի մակերևոյթը:

Մինչ ընդունում ենք եւրոպական քաղաքակրթութեան էական և ամենաբարձր արտադրութիւնները, մեծամասնութեան մէջ դեռ չեն տարածւած այդ կուտուրայի նոյն իսկ տարրերը. ուստի այդ արտադրութիւնները հետևանք չեն կուտուրայի ընդհանուր տարածման, լոգիկաբար չեն ըզրուում նրանից և հիմք դնելով միայն մի քանի կենտրոններում, թողնում են ամբողջ ժողովրդը խորին տգիտութեան խաւարի մէջ: Հասարակ գրագիտութիւնը ճրագի լոյսով պէտք է որոնել մեր գիւղերում:

Եւ դրա պատճառն այն է, կրկնում ենք, որ կուտուրան չէ տարածւում համահաւասար կերպով, նոյն իսկ համեմատաբար, որովհետեւ մինչ փոքրամասնութիւնը վայելում է նրա առատ սեղանի ամենահամադար կերակուրները, մեծամասնութիւնը չէ ճաշակում մինչև անգամ փշրանքներ:

Պէտք է կրթել ամբողջ, բարձրացնել ժողովրդի մեծամասնութեան կուտուրայի մակերևոյթը, պէտք է կենդանի գործ կատարել, իսկ կենդանի գործ կը լինի հիմնել գաւառներում, գիւղական կենտրոններում կիրակեայ դպրոցներ, ժողովրդական ընթերցարաններ, գրքերի պահեստներ, հրատարակել ժողովրդական ընթերցանութեան համար դրոշմը, կարգալ դասագրքեր, հիմնել ժողովրդական թատրոններ: Չը պէտք է բաւականաչափ միայն մանուկների համար հիմնված դպրոցներով, պէտք է աշխատել գրագիտութիւնը տարածել և ամբողջի մէջ, հայթայթել դիւրամարս մտաւոր անունը և ծուլութիւնը, արբեցողութիւնը, անշարժութիւնը կամաց-կամաց տեղի կը տան գործունէութեան, մտաւոր շարժման և ընդհանուր առաջադիմութեան:

Հ. Ա.

Ես, ընթերցող, իրաւունք ունեմ այդքան երկար կանթն առնելու այդ կէտի վրա, և նոյնը մի քանի անգամ կրկնելու, որովհետեւ ուզում եմ համոզել ձեզ, որ մեր խաւարամիտները չէին կարող այս, թէև սոսկալի, եզրակացութեան չը գալ, քանի որ անողոր հակառակորդները ստիպեցին— խօսմ չէ կարելի ճշմարիտ գալ մարդկանց սեպնել, դուրս քշել բոլոր տեղերից, բոլոր հիմնարկութիւններից, և յետոյ ասել, թէ չձայն մի հանէք, գնացէք ձեր տանը նստեցէք և հաշտվեցէք ձեր վիճակի հետ:

Այս նրանք էլ ունեն իրանց ինքնասիրութիւնը, իրանց պատմութիւնը, իրանց գործունէութիւնը, ի դէպս «Մեղուի», և այժմ էլ «Արձագանքի» և tutti quanti...

Սակայն թողնեք հանաքը: Դիմենք ընտրութեան:

Մեր լրագիրների մէջ ամեն օր կարդում ենք այսպիսի գեղեցիկ խօսքեր. «մեր եկեղեցին ժողովրդական եկեղեցի է. ժողովուրդն է, որ ընտրում է եկեղեցու բոլոր սպասաւորներին՝ ըսկած կաթողիկոսից մինչև վերջին տէրտէրը», և դրա հետ միասին աւելի գեղեցիկ խօսքեր՝ ընտրողական սկզբունք», ընտրողական իրաւունք» և այլն: Այդ խօսքերը դատարկ խօսքեր չեն: Հայոց եկեղեցու հիմնական սկզբունքներից մէկն է ընտրողական սկզբունքը: Եւ եթէ մեր եկեղեցին ունի մի քանի լայն, համակրելի սկզբունքներ, դրանցից ամենահամակրելին այդ ընտրողական սկզբունքն է, որ այդքան դարեր գոյութիւն է ունեցել, և միանգամայն ցանկալի է, որ միշտ էլ գոյութիւն ունենայ:

Այդ ընտրողական սկզբունքը հայոց եկեղեցին

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԿ

Մարտի 16-ին

Անցած կիրակի այստեղ եկեղեցու երէցփոխ էին ընտրում. ներկայ էր և թեմիս առաջնորդը՝ Սմբատեան եպիսկոպոսը, որ դեռ չարժանաւոր է ձմերել այստեղ: Սկզբունքով հակառակ լինելով այս կամ այն երէցփոխի, այս կամ այն տէրտէրացուի որ և է ինդիւթ թղթակցութեան երկար ու բարակ նիւթ դարձնելուն՝ կարճատեղիք այդ ընտրութիւնը՝ որպէս նմուշ այստեղի հասարակական ժողովների:

Գործակալ Խորէն քահանան կարդում է երէցփոխի կազմած հաշիւը: Գրադարանին կից դահլիճում սեղմված նստած են հարիւրի չափ ժողովականներ. մի այդքան էլ դուրսը և չէմքերում են կանգնողներ. տեղ չը կայ դահլիճում: Նոր շինութեան ընդարձակ դահլիճը, երևի, վերապահված է միմիայն հարսանիքների համար... Կարգացած մուտքի և ելքի դէմ առարկութիւններ են լինում. նկատում են, թէ անկանոն է դասաւորված և թէ անհասկանալի է: Տէր-Խորէնը՝ արդարանալու համար՝ մտանայոց է անում հաշուապահների վրա, որոնք որպէս թէ ստուգել են նախօրէին: Հաշուապահներից մէկը, որ ներկայ է, իսկոյն վեր է կենում և յայտնում, թէ ինքը չէ ստուգել հաշիւը, սխալվում է տէր հայրը... Երաւունակվում են նկատողութիւնները: Հաշիւից երևում է, որ երէցփոխը գործակալի գիտութեամբ եկեղեցու հին գրեթե անհետացած դէս ու դէն է արել՝ դանադան եկեղեցիներին նուէրներ է ուղարկել, առանց կոնստորիայի կարգադրութեան, 5 ռուբլիով մի հին քահ է վաճառել մասնաւոր մարդու, սրբադանի տեղի և ձմերելու համար հարիւր և մի քանի ռուբլու կահ-կարասիք է առել, ճանապարհածախսեր է տուել և այլն և այլն: Ժողովականները կարելի նկատողութիւններն անելուց յետոյ՝ ցանկութիւն են յայտնում աւելի պարզ, որոշ և կանոնաւոր հաշիւ տեսնել այսուհետեւ, և մի և նոյն ժամանակ նպատակայարմար են գտնում չը ինայել մի քանի ռուբլիներ, նախօրէին տպագրել հաշիւը և բաժանել բոլոր ծխականներին:

Իսկ սրբազանը կնքում է այդ բոլորը «օրհնութեամբ», որ բարեպաշտ ժողովուրդը մինչև այժմ— առ 1-ն յունվարի 94 թ.— ինայել է իր եկեղեցու համար 12 հազար և մի քանի հարիւր ռուբլի...

Հերթը հասնում է ընտրութեան: Խօսում են ընտրութեան եղանակի մասին. հարց է ծագում և ծխականներ որոշելու խնդրի մասին: Ծխականների խնդիրը երկար տարիներ է, որ հրապարակի վրա է. քանի-քանի անգամ նիստեր են տեղի ունեցել այս առթիւ, քանի-քանի անգամ գծաւոր

տարածել է իր հօտի ամեն մի անդամի վրա: Ամեն մի ծխական, որ պատկանում է լուսաւորչական եկեղեցուն,— իսկ ծխական հասկանալի է թէ ինչ է նշանակում,— իրաւունք ունի, առանց խտրութեան դասակարգի և դիրքի, քուէարկութեան մասնակցելու և ձայն տալու:

Ծխականի այդ իրաւունքի առաջ ոչ մի արհեստական արգելք դնել չէ կարելի.— ամեն մի լուսաւորչական հայ, որ մկրտված է լուսաւորչական եկեղեցում, որ ընդունում է եկեղեցու կրօնական խորհուրդները, իրաւունք ունի մասնակցելու եկեղեցական ընտրութեան իբրեւ ծուլ, առանց հաշիւ տալու, թէ արդեօք նա հարուստ է, թէ աղքատ, գրագէտ է, թէ անգրագէտ, հաղորդվել է այս տարի, թէ ոչ, պատ է պահում, թէ ոչ, եկեղեցի է յաճախում, թէ ոչ... Եւ քանի որ մի օր և է լուսաւորչական հայ համարվում է այս կամ այն եկեղեցու ծուլ, քանի որ քահանան գնալով այդ ծխականի տունը՝ կատարում է կրօնական ծէսերը, ընդունելով նրան իբրեւ իր ծուլ,— այդ ծխականը կատարեալ իրաւունք ունի ընտրութեան օրը գալ և քուէ տալ, եթէ մինչև անգամ նա տարիներով այդ եկեղեցու երեսն էլ չէ տեսնում:

Եկեղեցու տեսակետից, ի հարկէ, շատ լաւ կը լինէր, եթէ լուսաւորչական դասաւորութեան պատկանող ամեն մի մարդ ամենայն խստութեամբ կատարէր կրօնական պահանջները, օրը երկու անգամ եկեղեցի գնար, ամեն տարի հաղորդվէր, չորեքշաբթի և ուրբաթ պատ պահէր, ծոմ պահէր և այլն և այլն: Սակայն երբ մի մարդ, այս կամ այն պատճառով, չէ անում այդ բոլորը, այդ դեռ չէ նշանակում, որ նա ծուլ չէ. այնու ամենայնիւ նա ծուլ է, և քանի որ ծուլ է, ուրեմն ի-

թիւններ են ծագել այդ մասին իրանց՝ քահանաների մէջ, քանի տեսակ կուսակցութիւններ են կազմակերպվել և լուծվել այս կամ այն քահանային պաշտպանելու, միմիայն պախարակելու, երրորդին հալածելու համար և այս բոլորի հետեւանքը եղել է այն, որ անցեալ տարի մօտաւորապէս բաժանել են 5 թէ 6 թաղի, համաձայն քահանաների քանակութեան, թէ ամեն մի քահանայ որքան ծուլ ունի: Թէ որքան է ընդհանուր ծուլների թիւը— այդ դեռ վերջնականապէս որոշ չէ, և չէ էլ կարելի հեշտութեամբ որոշել, որովհետեւ այստեղ նախ՝ չարունակ աւելանում է եկեւոր ընտանիքների քանակութիւնը այս և այն կողմից, երկրորդ՝ նոյն արագութեամբ էլ կատարվում է ընտանիքների տեղափոխութիւնը՝ այստեղից Սև քաղաք, Սև քաղաքից Բալասանի և այլն, և երրորդ՝ տներ փոփոխելը, որ հասարակութեան մի մասը դատապարտված է տարինը մի քանի անգամ կատարելու, աւելի քան դժուարացնում, ծանրացնում է խնդիրը: Իրերի այդ դրութեան մէջ, անկասկած, չէ կարելի մեղադրել ծխատէր քահանային, որ չէ կարողանում միշտ հետեւել իր ծխականների տեղափոխութեան: Եկեղեցական օր և է կանոն, կրօնական մի ծէս, եթէ հարկադրում է ծխականներին քահանայ հրաւիրելու— քահանան հարաւորութիւն ունենում է այցելելու, հակառակ դէպքում, ոչ ծխականն է ուղում իր քահանային ճանաչել, և ոչ քահանան է կարողանում նրան հովուել:

Այսպիսի մի անորոշ խնդրի վերաբերեալ հարց է ծագում, թէ ո՞ւմ պէտք է ծխական ընդունել, ո՞վքեր իրաւունք ունեն ընտրութիւններին մասնակցելու և ոչինչ որոշ պատասխան չեն տրվում ժողովի ղեկավարների կողմից, թերեւ նրա համար, որ խօսողները «կարծապետներ» են կամ չնըրդատարները: Այդպէս է, դժբախտաբար, ընտրողական պայքարը մեղանում: Խօսում է մի վաճառական, մի փողաւոր «պրիկաշիկ», յարգանքով լցում, բանի տեղ են դնում. խօսում է խեղճ գլխին մի «անիփոդ» երիտասարդ, լրջամիտ մի ուսուցիչ, ուշադրութեան չեն առնում: Երէկվայ տըր և խաւորը հաղար ու մի աններելի միջոցներով փող է դիզել և մարդ է դառել մեր հողերը հայրերի, մեր ժողով կառավարողների աչքում. մօտիկ անցեալի «գեաղաւ», ստախօս, չորդորթի և ստոր պրիկաշիկը իրաւունք ունի խօսելու, որ դատարկ գլխով դատողութիւններ անելու, որովհետեւ լիքը գրպան ունի, իսկ ինտելիգենտ երիտասարդը, աղիւս ուսուցիչը իրաւունք չունի խօսելու, որովհետեւ դատարկ գրպան ունեն... Գոնէ այդ ողին է տիրապետում այստեղի հասարակական ժողովներին ժամանակ, երբ կապիտալիստները առիթ են ունենում գործ ա-

րաւունք ունի մասնակցելու ընտրութեան:

Այդ տարրական ճշմարտութիւն է, չէ, ընթերցող: Բայց կարող էք երեսայել, որ մեր խաւարամիտները փորձում են բողբոջել այդ ճշմարտութեան դէմ, ընտրողների առաջ սահման դնելու: համար: Ընտրողական իրաւունք ունենալու համար,— ծուլ ու մուլ ճանապարհով հասկացնում է «Արձագանքը»,— պէտք է պատ պահել, ամեն օր եկեղեցի գնալ, ապաշխարել: Հետեւաբար, խաւարամիտների լօգիկայով, ով պատ չէ պահում, ով ամեն օր եկեղեցի չէ գնում, և այլն,— նա իրաւունք չունի ընտրութեան մասնակցելու, քուէ տալու: Դրան ասում են՝ унтеръ-офицеръ сама себѣ вышѣла.

Մի կողմից առաջարկում են պայման դնել, որ միայն նա իրաւունք ունենայ մասնակցելու ընտրութեան, ով պատ է պահում, եկեղեցի է յաճախում, ապաշխարում է և այլն և այլն, իսկ միւս կողմից անամօթաբար գոռում են. «Ի՞նչ կը նշանակէ ժողովուրդը բերել լինել եկեղեցի, ինչ կը դուրսգանք, տղէտ արհեստաւորներն: Բայց միթէ մոռանում էք, պարոններ, որ հէնց այդ կրկնութեան, այդ դուրսգնալից են և այդ տղէտ արհեստաւորներն են, որ ամենայն հարազատութեամբ պահպանում են կրօնական բոլոր ծէսերը, պատ են պահում, եկեղեցի են յաճախում, ապաշխարում են, հաղորդվում են և եկեղեցու քարերը համբուրում են իբրեւ սրբութիւն:

Եթէ այդպիսի պայման էք դնում, ուրեմն ամենամեծ ընտրողական իրաւունքը պէտք է ունենայ ամբողջը, իսկ չուսնայինը, ամբողջ գլխին քաւորը կարգադրողները պէտք է չը համարձակվէք մինչև իսկ մօտենալ քուէտուփին: Եթէ այդ կար-

աւջ տանելու ոչ-կապիտալիստների հետ: Ճշմարիտը խոստովանած՝ յաղթութիւնը միշտ մերն է կապիտալիստներին— թէև ոչ-կապիտալիստները մեծամասնութիւն են կազմում: Ինչպէս շատ անգամ, այս անգամ ևս նոյնը տեղի ունեցաւ: Դեռ հարցերը չը պարզած, դեռ չը պատասխանած, թէ որքան է ծխականների թիւը, քանի ձայնով ընտրված երէցփոխը պէտք է օրինաւոր համարվի, եպիսկոպոսը վեր է կենում, ժողովից դուրս գնում— պատուիրով գործակալին, որ չը լսէ «դատարկախօսներին», աշխատէ շուտով ընտրութիւնը կայացնել. իսկ տէր-Խորէն քահանան առաջին կարգում նստած՝ ազգա ծխականներին խորհուրդ է տալիս վերնտրել հին երէցփոխին... Լսվում են ձայներ՝ «ընդունում ենք», «ընդունում ենք»: Հին երէցփոխը վերնտրվում է առանց ժողովրդականների մեծամասնութեան, որը առանց արձանագրութիւն ստորագրելու՝ դուրս է գնում դահլիճից, չանաւաղ գործակալի թախանձանքին— չպարոններ, ստորագրեցէք,— յետոյ դնացէք:

Ն. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուում ենք, որ Թիֆլիսի վրաց կանանց չըջանում այժմ ցանկութիւն կայ հիմնելու վրաց «կանանց» բարեգործական ընկերութիւն:

Կ. Պոլսից հաղորդում են, որ մարտի 5-ին, անգլիական դեսպան սըր Բլեքբրի առաջին անգամ ներկայացաւ սուլթանին: Լուր էր տարածված Կ. Պոլսում, որ այդ տեսակցութեան ժամանակ խօսք պէտք է լինէր և հայերի մասին: Սակայն բացի սուլթանական քաղաքավարական խօսակցութիւնից, ուրիշ օր և է քաղաքական խօսակցութիւն, ինչպէս հաղորդում են, տեղի չէ ունեցել:

Մեզ հաղորդում են, որ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութիւնը ստացել է յօդուտ Երեւանի և Կարսի նահանգների կարօտեալների երկու հազար ռուբլի, որից 1000 ռ. նուրբել են մի խումբ կանայք, իսկ 1000 ռ. ֆիլիսոփան և ընկ. առեւտրական տուներ:

Մեզ գրում են Թավրիզից, որ պարսից Շահը մերժել է Թավրիզի հայ արհեստաւորների խնդիրը և հրամայել է անպատճառ նրանցից հարկ վերցնել: Այդ կարգադրութիւնը շուտով պէտք է սկսի գործադրվել:

Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ Սինօղը դիմել է ուր հարկն է, որպէս զի կաթողիկոսական անդրանիկ կոնդակը հասցնեն թիւրքաց Հայաս-

ժիքի էք, էլ ինչու էք կատարում, փրկում, երբ եկեղեցում տեսնում էք ամբողջ, հասարակ ժողովուրդը...

Հեռու աչքակապութիւնները:

Ուզում էք ծառայութիւն մատուցանել եկեղեցուն և ժողովրդին,— այնպէս արեցէք, որ ընտրութեան օրը բոլոր ծխականները, առաջինից մինչև վերջինը, եկեղեցի գան, սովորեն ձայն տալ, կարծիք ունենալ, քննադատել: Այժմեան կանոններով ընտրութիւնը կարող է տեղի ունենալ, երբ ծխականների 1/3 մասը ներկայ է:— Ահա, եթէ փոխելու մի բան կայ, դա է: Մինչև այժմ, երբ ծխականները չէին հնարաբերվում և չէին գալիս, այդ չափը միայն ունէր. իսկ այժմ, երբ ժողովուրդը արդէն սովորեց գալ, պէտք է փոխել այդ չափը և որոշել, որ առաջին ժողովին ներկայ լինի գոնէ կէսը: Եւ դա աւելի խնայելի և աւելի արդար կը լինի:

Այնպէս արեցէք, վերջապէս, եթէ կարող էք, որ ընտրութեան մասնակցող ամեն մի ծխական դրա գէտ լինի, սովորած լինի կարգաւ և զրկւ.— մի պայման, որ կը նպաստէ ժողովրդի առաջադիմութեանը և քաղաքակրթութեանը, մրցանակով պարտադիր ուսում...

Սակայն մեր խաւարամիտները, փոխանակ այդ տեսակ քաղաքակրթիչ փոփոխութիւնների մասին մտածելու, փորձում են զրկել ժողովրդին նրա անխելի իրաւունքից, մի իրաւունք, որ նա դարբեցի ի վեր վայելում է...

Եւ այդ չը տեսնված յետադիմական շարժումով մեր խաւարամիտները իրանք իրանց գերադանդեցին:

Խ. Մարտիան

տան, այնպիսի թեմական հոգևոր իշխանություններին:

Սեպ հաղորդում են, որ Թիֆլիսի ս. Գեորգ եկեղեցու ծխականները մի բողոք են պատրաստել թեմական առաջնորդին տալու համար, որի մեջ յայտնում են, թե մարտի 13-ի ընտրությունները կատարվել են համաձայն գոյություն ունեցող հրահանգների, որ նախագահողը ղեկավարվել է այդ հրահանգներով, և որնեմ ընտրությունը անկանոն համարելու հիմք չը կայ, ինչպես այդ պնդում են մի քանի անձինք:

Լսում ենք, որ Թիֆլիսի ս. Գեորգ եկեղեցու ծխականները 115 հոգի ներկայացրել են թեմական առաջնորդին մի յայտարարություն, որի մեջ յայտնվում էր 1) մարտի 13-ի ընտրությունները կատարվել են կանոնադրական կերպով: 2) ժողովը նախագահողը՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանը վարել է նիստը կանոնադրական կերպով և 3) Աշոտ քահանայ թեմապետը ժողովի ժամանակ իրան թող է աւել անտեղի գործողություններ, ինչպես նաև առաջնորդի քննությունը և կարգադրությունը:

Այսօր, մարտի 22-ին, լինելու է Գեղարամյան սպան ընկերությունների ընդհանուր ժողովը: Ի միջի այլոց պետք է քննվի գլխավոր անձնակազմի ղեկավարի կազմակերպչական հարցը:

Յոգուտ կարսի, Ալեքսանդրօպոլի և Ներսիսի կարոտակների ստացանք. 1) Ալեքսանդրօպոլի Յակոբ Զարաթյանցից 20 բուլբու: 2) Շուշուց, Մանգակյան խոնավից 20 բուլբու (Բարեգործական ընկ. խորհրդին յանձնելու համար, որ և յանձնեցին): և 3) Ներսիսից 20 բուլբու, Գեորգ քահանայ Զաքարյանի միջոցով, 174 բուլբու, հանդանակված 16 անձներից: Ուրեմն ընդամենը նախկին 6) բուլբու հետ այժմ ունենք 254 բ.: Դրանից այսօր, մարտի 22-ին, 100 բուլբու ուղարկեցինք Ներսիսի Բարեգործական ընկերության ձեռքին, ձեր ճաշարանի համար: Ուրեմն նախկին 862 բ. ստացածների հետ, մինչև այժմ ստացել ենք 1076 բուլբու և ուղարկել ենք 1022 բ.: Խմբագրություն մեջ մնում է 54 բ.:

Մարտի 20-ին Թիֆլիսի կուսակցության եկեղեցում հողահանգիստ կատարվեց պրոֆեսոր Ներսիս Ներսիսյանի յիշատակին, որին ներկայ էր երկու տեղի բազմաթիվ հասարակություն:

Անշտափանս աղյուսներին հասակաւոր մարդկանց հետ պատկեր տեղի է ունենում ոչ միայն յետ ընկած գիւղերում, այլ և Բագուի պէս քաղաքում «Kacm» լրագրող հաղորդում է մի ստեղծված գեղեցիկ:—10 տարեկան և 7 ամսական մի երեխայ պատկեր են մի հասակ առած տղամարդի հետ: Այդ գեղեցիկ մեծ աղջկան է գցել Բագուի հասարակության մեջ: Շատ ցանկալի է, որ մեր թղթակիցները հրապարակ հանելին, թե ով է այն քահանան, որ իրան թող է տուել այդպիսի մի աննեղելի յանցանք:

Կիրակի, ամսի 20-ին, արքունական թատրոնում կայացաւ ջութակահար Միլոսլավսկի կոնցերտը, որ գրաւել էր բազմաթիվ հասարակություն: Միլոսլավսկի Թիֆլիս եկաւ մի քանի տարի առաջ և այն ժամանակ նա ցուցադրեց, իբրեւ տեխնիկական բաւ ուսումնասիրած մի անձն: Այս տարվայ երկու կոնցերտները ցոյց են տալիս, որ ջութակահարը ոչ միայն ունի կատարելագործված խաղ, այլ նա գիտէ իր ջութակի լարերի միջոցով հաղորդել երաժշտական ստեղծագործությունների ոգին, արտայայտել բովանդակությունը: Վենետիկյան լեգեյի և «Տարածակայի», վենգերական տաղի, Միլոսլավսկի յորինումների մեջ նա ցոյց տուեց իր արտասովորական ամբողջ ուժը: Հասարակությունը վարձատրեց նրան բուռն ծափահարություններով, մի փունջով և մի ծաղկապսակով կանաչից կազմված ջութակով:

Կովկասյան հայոց Բարեգործական ընկերության խորհուրդը այս օրերս թեմական տեսուչներին միջոցով ուղարկել է հայոց դպրոցների ուսուցիչներին և վարժուհիներին յայտարարություն, որով յայտնում է, թե մայիսի 1-ից պետք է բացվեն ուսուցչական կուրսեր: Գրա հետ միա-

սին խորհուրդը առաջարկել է մի շարք հարցեր պատրաստվել ցանկացողներին, որոնց պատասխանները ստանալուց յետոյ, ընկերությունը կը ձեռնարկի կուրսերի բացման:

ԱԼԷԿՍԱՆԴՐՕՊՈԼԻՑ մեզ գրում են. «Թիֆլիսից գաղթած հայ ընտանիքները լցված են Ալեքսանդրօպոլ. մարզական աղքատների թիվը անհամար է: Բարեգործական ընկերությունը ձեռքով ուղարկված ցորենը հասել է այստեղ և մեծ միջոցաւորեց պատճառել ժողովրդին»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Տեղիս օրիորդաց դպրոցի հոգաբարձու Ի. Բալանթարյան» Վրձագրութիւն № 24-ում պարտք է համարել կարճ կերպով «սուտ» անուանել (սակայն առանց որ և է ապացոյցի): «Մշակի» մէջ հաղորդված այն լուրը, որ վերաբերում է յիշեալ դպրոցի «ընկալված» վիճակին: Բացատրելու կարելի չը կայ, որ երբ մի օր և է յօրտաւոր մէջ գտնված կէտերը հերքել հարկ կայ, պէտք է փաստերով հերքել: Բայց վերջինը հաղորդածը առանց փաստերի սուտ անուանել: Դա աւելի քան ծիծաղելի բան է: Նոյն միջոցներին է դիմել պ. Բալանթարյան, և կարծել է թէ դրանով գործը վերջացած է: Սակայն, պ. հոգաբարձու, դուք գրեցիք չէք աղատվի. այժմ մենք դիմում ենք ձեզ, հարցնելով. —այդ լուրը որ կէտն է սուտ, կամ եթէ սուտ է, ինչու գէթ մի չնչին փաստով չէք ապացուցանում... Հրաւիրում ենք ձեզ ապացոյցներով պատասխանել այս հարցերին, որոնք կարծում են մեր հաղորդած լուրի բոլոր կէտերը. —արեւոյ դպրոցը չէ գտնվում ընկած վիճակի մէջ: Սուտ է այն, որ դպրոցական խումբ կազմված է ողորմելի վարժուհիներից և ուսուցիչներից. արեւոյ առաջ վարժուհին չէ մնալու հայրենի ամենատարրական ուղղագրութեան դէմ: Եթէ, կարող էք այս հարցերին պատասխանեցէք, միայն լրջ ու թ ու մ, հակառակ դէպքում ստիպված կը լինենք մեր հաղորդած լուրի իւրաքանչիւր կէտը ապացուցանել բաղմամբ իւր փաստերով»:

ԳԱՐԱՉԱԳԻՑ մեզ գրում են մարտի 14-ից. «Ներքին-Արտաքին շրջակայ Գարսիսաբա, Թանդամ է այլ գիւղերում երեխաների մէջ տարածված է ծաղիկ հիւանդությունը, որը բաւական զոհեր է տանում երեխաներից: Պատճառ են, որ այդ հիւանդութեամբ վարակվում և մեռնում են նոյնպէս նրանք, որոնք վրա արդէն կատարվել է ծաղիկ պատուաստումը և նոյն իսկ կրկնապատուաստումը... Ի՞նչ կը նշանակէ այդ Արեւոյ այդ հանգամանքը ծաղիկ պատուաստողների գործնական գիտություն, պրակտիկայի թեւրութեան հետեւը չէ, որ յաճախ է պատահում: Ծաղիկ պատուաստման մասին մենք դեռ սրանից երեք տարի առաջ առիթ ենք ունեցել խօսելու «Մշակի» էջերում, երբ այդ պատուաստումը իր ներգործությունը չէր անում մանուկների վրա, և երբ ժողովուրդը ինքն բողոքեց ուր հարկն է բաղմամբ դոհեր ունենալուց յետոյ: Ծաղիկ պատուաստման անկանոնությունը ողորմելի ժողովրդին, որ հեղուկ—լիմֆան պէտք է թարմ լինի և նրա փչանալուց անմիջապէս յետոյ պէտք է նոր լիմֆա պատրաստել և պատուաստումը իր ժամանակին կատարել: Ծաղիկ պատուաստումը բժշկական—առողջապահական միջոցներից ամենաառաջինը է, հետեւապէս պէտք է աւելի բարեխղճօրէն, աւելի բժշկական հմտութեամբ վերաբերվել դէպի այդ գործը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կոչուտի մասը, «Neue Freie Presse» լրագրի կարծիքով, շատ դժուար կացութեան մէջ կա: Բայց ինչ վեկերին միմիայնությունը: Լրագրի ասում է, թէ Կոչուտի կուսակցությունը կը պահանջի, որ Կոչուտին զոհն նշանակի պատիւներ և յարգանքներ տրվեն, որպիսի պատիւներ տրվելին Գեակին իր ժամանակին: Սակայն աւստրիական կառավարությունը չէ կարող ընդունել Կոչուտի կուսակցության այդ պահանջները: Կոչուտ և Գեակ—երկուսն ևս ունեւարական հայրենասէրներ են և աշխատում են իրանց ազգի ազատութեան և առաջադիմութեան համար: Բայց

նրանց գործունեութեան եղանակը տարբեր էր: Կոչուտ մինչև իր վերջին շունչը հաւատարիմ մնաց իր մի անգամ դժգոհած քաղաքական հայեացքին, որ էր անհաշտ թշնամութեան դէպի հարստութեան թագաւորական տունը և Ունգարիայի կառավարչական շրջանում: Աւստրիայից: Եւ երբ Ունգարիային շնորհվեց 1867 թ-ի սահմանադրությունը և հաշտութեան կայացաւ Ունգարիայի ու Աւստրիայի մէջ, Կոչուտ այնու ամենայն անհաշտ թշնամի մնաց Աւստրիային և կամաւոր աքսորական մնալով՝ չը մոռացաւ այն վիրաւորանքը, որ աւստրիական կառավարությունը հասցրեց նրան 1851 թ-ին, հրամայելով դահճի ձեռքով կտրաւորել բարձրացնել նրա պատկերը:

Գեակ ընդհակառակ, իր հայրենիքի հաւատարիմ դաւաճել և նրա շահերին նուիրված լինելով՝ հանդերձ, չափաւոր էր իր պահանջների մէջ և աշխատում էր Ունգարիայի ազատութեան համար հաշտութեան կայացնելով Աւստրիայի և Ունգարիայի մէջ: Այդ էր պատճառը, որ երբ Գեակ մեռաւ, նրա թաղումը կատարվեց պետական հաշուով և մեծ շքեղութեամբ: Գեակին արձան կանգնեցրին ունգարական մայրաքաղաքում:

Այժմ Բուդա-Պէշտի «Berliner Tageblatt» լրագրին գրում են, թէ ունգարական կառավարություն և Ֆրանց-Յոսեֆի կայսրի մէջ վերջնական համաձայնություն է կայացել այն բանի մասին, թէ ինչպիսի պատիւներ պէտք է տրվեն Կոչուտի յիշատակին: Կոչուտի յիշատակին յարգանքներ կը մատուցանվեն և բեկիստադում, ուր հանգիստւոր կերպով կը յիշեն նրա մատուցած ծառայությունները ազգին, բայց ունգարական պետական միջոցներով նրա համար ոչ մի արձան չի կանգնեցնել: Սահմանադրական թագաւորը չէ կարող արգելել պարլամենտին իր զբաղմունքները յայտնելու ներկայ դէպքում, բայց որպէս Կոչուտի թընդամի, թագաւորը, ի հարկէ, չէ կարող թող տալ, որ նրա համար արձան կանգնեցնեն ունգարական պետութեան հաշուով:

ԱՆԳԱՍ

Անգլիական լրագրիները վառ գոյներով նկարագրում են այս օրերս Լոնդոնի Հայդ-Պարկում տեղի ունեցած ժողովրդական ցոյցը լորդերի ժողովի դէմ: «Daily News» լրագրին ասում է, որ այդ ցոյցին մասնակցում էին մօտ 100 հազար հոգի: Մասնակցողների ահագին խմբեր ճաշից յետոյ սկսեցին հաւաքվել Հայդ-Պարկում, ուր 12 պատգամներ էին չինված հետաքննիչի համար: Ունգարիայի մամուլում բաղմունքներ խոսվում էր երկու ամբողջական շուրջը, ուր ճառեր էին խոսում միմիայն նախագահ քանդակարան պատգամաւոր Ջոն Բէրնս և Տիւլէր: Բէրնսի ճառը նուիրված էր լորդերի ժողովի խիստ քննադատանքին, որը ոչ միայն մերժեց բանաւորների համար նշանաւոր բիլլը՝ ձեռնարկողների պատասխանատվութեան մասին, բայց և ստպակց իրանգական օրինադիրը ու խեղճութեան ծխական խորհուրդներին վերաբերեալ բիլլը: Նոյն բովանդակութեան ունեցած և մնացած հետաքննիչի ճառերը: Նրանցից մի քանիսները հրաւիրում էին բանաւորներին ընտրությունների ժամանակ քուէ չը տալ այն կանգնեցումներին, որոնք պաշտօնապէս չեն խոտանայ աշխատել լորդերի ժողովը ջնջելու մասին: Այդ միտնողները բուհարկութեամբ մի վճիռ կայացաւ, որով պաշտարակվում է լորդերի ժողովը՝ ձեռնարկողներին վերաբերեալ բիլլը մերժելու համար և հրաւիրում է կառավարությունը միջոցներ ձեռք առնել լորդերի ժողովը վերացնելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջնային լրագրիներին հետագրում են, որ Կոչուտի համար արձան կանգնեցնելու նպատակով արդէն հաւաքված է հարկի հազար գուլդեն: Կ. Պոլսից «Polit. Correspond.» լրագրին լուր են հաղորդում, թէ մեծ վիզիբին հրամայված է շատ մանրամասն ղեկեցում կազմել սուլթանի համար բոլորական դպրոցների մասին Մակեդոնիայում: Որպէս հաւատացնում են, սուլթանը ցանկանում է վերականգնեցնել նախկին կարգերը Մակեդոնիայում, որպէս զի Մակեդոնիայի ազգաբնակչութիւնը առիթներ չունենայ յուզվելու և դժգոհութեամբ կարծում են, որ այդ առիթով չուտով համաձայնութեան տեղի կունենայ Բ. Գրան և բոլորական էկզարխի մէջ:

«Berliner Tageblatt» լրագրին հետագրում են, որ ոստիկանութեան ձեռքն է ընկել միջազգային խաբէրանքի մի ամբողջ խումբ, որը բաղկացած է 22 հոգուց և որը պատրաստում էր ամեն տեսակ կեղծ գովաւանդներ, դիպլոմներ, վկայականներ և այլն: Խմբի մէջ գրտնվում են երկու գերմանացի, ութ ռուսներ, ութ աւստրիացիներ, երկու թուրք և երկու յոյն:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աֆգանական էմիր Աբդուրահմանը Մէշէդի մըզկիթին ընծայեց դուրանի մի գեղեցիկ օրինակ՝ դրված ոսկէ արկղիկի մէջ: Այդ պարզեւ ափսոսանքնական դեսպանները հանդիսաւոր կերպով յանձնեցին իօրասանի նահանգապետին, որը դիմաւորեց և հրաւիրեց նրանց մտնել մզկիթը: Կարծում են, որ Աբդուրահման խանը այդ ընծայով կամենում է իր կողմը գրաւել պարսկական հոգեւորականութիւնը:

Յայտնի մանկավարժ պրոֆեսոր Վլէչկօյը, Բերլինի դպրոցների ընկերություն մէջ կարգաւ մի ընթերցանութեան հանդիսաւոր մասին Չիկագոյի ցուցահանդէսում: Եթէ որ և է չլինում, — նկատեց դասախօսը, — Գերմանիան առաջնութեան արժանին է ստացել Կոչուտեան ցուցահանդէսում, դա անկասկած ժողովրդական կրթութեան շրջանում: Եւ Ամերիկացիներին հիացրեց արդէն միայնակ դպրոցական ուսման ստատիստիկան: Ամբողջ Պրուսիայում դպրոցական հասակ ունեցող 51/2 միլիոն մանուկներից միայն 945 հազար գրել-կարդալ չեն սովորում: Բերլինում բոլոր մանուկները ուսում են առնում, իսկ Չիկագոյում, օրինակ, 50,000-ից աւելի մանուկներ կրթութեան չեն ստանում: Ժողովրդական դպրոցի նշանակութեան մասին ցուցահանդէսն այցելողները կարող էին զառափար կազմել և հանդէս դրված մանկավարժական ամսագրիցները, որոնց թիւը Գերմանիայում 239 է: Աւելի քան 80,000 աշակերտական տեսարկներից ուսուցիչներից արած նշեկատողություններով հանդերձ հարաւորութեան էին տալիս ամերիկացի ուսուցչին ծանօթանալ գերմանական աշակերտների առաջադիմութեանը: Եւ դպրոցի պահանջների հետ Գերմանական կառավարությունը միջոցներ չը խնայեց աւելի շօշափելի կացութեանը իր դպրոցները: — Դպրոցական շինութիւնների մոլէճներ, քարտէզներ, գործունեւոր, նստարաններ, դպրոցական խողեր և այլն մեծ առատութեամբ հանդէս էին դրած: Բաւական է ասել, որ դպրոցական բաժին Ամերիկա փոխադրվեց երկու մեծ շոգենաւերով: Գերմանական մանկավարժութեան գովելի յատկութիւններից մէկն էլ կոյրերի կրթութեան գործը դարգացումն է: Համեմատելով գերմանական դպրոցը ամերիկականին հետ, վլէչկօյը գտնում է, որ վերջինս, այսինքն ամերիկական մի քանի առաւելութիւններ ունի, օրինակ, շատ լաւ է աւանդվում նկարչութիւնը, առաջին քայլերից մանուկներին ինքնաշարժունեութեան են ընտելացնում և այլն: Մի և նոյն ժամանակ ամերիկական դպրոցը ունի և իր խոշոր պակասութիւնները, որոնք չը կան գերմանական դպրոցում: Գերմանական ուսուցիչը դաստան մէջ մանուկների հետ անցնում է ամբողջ դասընթացը և դասադիւրը միայն օժանդակիչ միջոց է, այն ինչ Ամերիկայում ուսուցիչը մեծ մասամբ աշակերտներին է թողնում դասերը սովորել գրեթեով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 18 մարտի: Ռուսաց և դանիական կառավարությունների մէջ բանակցություններ սկսվեցին նոր առևտրական դաշնագրի մասին, այժմեան, ոչ կատարելապէս պարզ, դաշնագրի տեղի ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 մարտի: Հիւսիսային երկաթուղու կառուցանելու հարցը վերջնականապէս պէտք է վճարվի ոչ ուշ այս տարվայ ապրիլից: Այսօր փակվեց Մոսկվա-Կովկաս-Անդրկասպական Սև ծովով և Վոլգայով հաղորդակցութիւնների ներկայացուցիչներին համալուծար ժողովը վճարված է բաղնիկի և գերապի սեղանից ստացված խղի տեղափոխութեան տարիքը պակասեցնել. նոր տարիք սահմանել բաղնիկի համար: Անդրկովկասեան երկաթուղու կայանները: — Լավում է, որ բոլոր երկաթուղուներին նոր հիմնով գլխաւոր վարչութեան պետ նշանակվում է ինժեներային խորհրդի նախագահ Վ. Սալով: — Մարտի 22-ին բացվում է ռուս-գերմանական, ռուս-գերմանա-բելգիա-ֆրանսիական և ռուս-աւստրո-ունգարական միջազգային հաղորդակցութիւնների ներկայացուցիչների համալուծար ժողովը՝ սակաղինը վերաքննելու համար, աչքի առաջ ունենալով նոր առևտրական դաշնագրի ներքին:

ՎԻԵՆԱ, 19 մարտի: Այսօր Բուդա-Պէշտում, կէրէպտեան գերեզմանոցում տեղի ունեցաւ Կոչուտի կնոջ և աղջկայ թաղումը: — Այստեղի ֆի-

Նախագահան շրջաններում շատ լաւ տպագրութիւն գործեց Բերկինց ստացված տեղեկութիւնը, թէ կրկին թիւ կը տրվին փոխառութիւններ տալը ուստաց արժէթղթերի գրաւակաւումը: Բորսան ողջունեց այդ տեղեկութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի: Բացի կովկասեան և Պոլսեայ նահանգներէն, կայսրութեան բոլոր մնացած նահանգներում և շրջաններում խօշորան վերջացած է համարվում: Պետական խորհուրդը կը ջանի ապահովագրական հիմնարկութիւնները և ընկերութիւնները գործունէութեան վրա կառավարական հակողութիւն նշանակելու գործը:

ՎԻԵՆԱ, 20 մարտի: Պաշտօնական լրագրում հրատարակված է ընդհանուր միջնորդութեան հրաման, որով երկուշաբթից, ապրիլի 2-ին, աւտո-ռուսական մարտային շրջանը ուստաց արդիւնները ներմուծելու ժամանակ այդ արդիւններէ վերաբերմամբ պէտք է դորձադրել աւելի զիջող սկզբունքը: Մի և նոյն ժամանակ առետրի միջնորդը շրջաբերականով իմաց տուեց բոլոր առետրական տոմսներին, Ռուսաստան ներմուծվող աւտոքիական ապրանքներին վերջնական մարտային հարկեր, որ սահմանված են Գերմանիայի և Ֆրանսիայի հետ Ռուսաստանի կապած առետրական դաշնագրի ներքին:

ԲԵՐԼԻՆ, 20 մարտի: Ֆրիդրիխսթրէսէի հեռագրում են, որ ֆրիդրիխսթրէսէի կոմս Մոլտկէ կայսրի անունին յանձնեց իշխան Բիսմարկին մի հոյակապ զրահ էպոլետներով և փողով: Իշխանը իրեն չափեց իր վրա զրահը և շատ գոհ էր պարզելէ: Կայսրը իշխան Բիսմարկին մի ողորմած հեռագիր ուղարկեց, որի մէջ հաղորդելով նրան, թէ կոմս Մոլտկէի ձեռքով ուղարկել է զրահը, աւելացնում է, որ զոգրպատէ զրահը գերմանական հաւատարմութեան և շնորհակալութեան նշան է, որ ինքն ցանկանում էր նրան արտայայտել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ	
Մարտի 18-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	93 ր. 10 Կ.
Բերկին վրա 100 մարկ . . .	45 ր. 55 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36 > 87 1/2 >
Ռուսի . . .	արծէ . . . 7 > 47 >
Մարտային կուպոններ . . .	149 > 25 >
Արծաթ . . .	. . . > >
Բորսային դիվիդենդ . . .	5 > 7 >
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .	103 > >
. . . 2-րդ . . .	102 5/8 > >
. . . 3-րդ . . .	75 > >
5% ռուսկայ ընտա . . .	161 > >
4 1/2 ռուսկայ փոխառութիւն . . .	> >
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	> >
. . . 2-րդ . . .	101 > 50 >
. . . 3-րդ . . .	102 > >
. . . 4-րդ . . .	> >
Ներքին 5% առաջին փոխառութ. . .	243 > 50 >
. . . երկրորդ . . .	221 > 25 >
Պետական երկաթուղային ընտա . . .	103 > >
4 1/2 ընտա . . .	> >
4% ներքին փոխառութեան . . .	95 > >
5% զրաւ. թղթ. ապ. կալ. բանկի . . .	101 > 50 >
Ապ. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .	> >
Գրաւ. թղթ. . .	192 > 75 >
4 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի . . .	99 > 25 >
4 1/2% զրաւական թղթեր կալուած. . .	> >
Փող. կրեդիտ. ընկեր. մտապ. . .	152 7/8 > >
. . . թղթապ. . .	101 1/8 > >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	101 > 75 >
ընկերութեան օրդիգայրանք . . .	101 > 75 >
Մոսկովայի քաղաք. օրդիգայրանք . . .	100 > 75 >
Օրդիգայր . . .	98 > 25 >
Թիֆլիսի . . .	98 > 50 >
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի . . .	98 7/8 > >
. . . Գրաւ. թղթ. . .	> >

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.Ռ.Ա.Զ.Ի.Ն. ՄԱՍՆԱԻՐ
ՀԻՒՍՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, վօրցօյով արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիրակի օրերէն:

Ա.Ռ.Ա.Ռ.ՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ—11—12 Ժ. վերաբու-
ժութեան և վնասական (սիֆիլիս) հիւանդու-
թիւններին:

Կ. Գ. ԶԻՆՈՎԱՆԻ—9—10 Ժ. աչքի և ներք-
նային:

Գ. Գ. ԲՈՒԿՈՎԱՍԿԻ—10—11 Ժ. ներքին, երե-
խաների և կանանց:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—11 1/2—12 1/2 Ժ. ախանջի,
կոկորդի, ջրի և կրծքի:

Կիւն-բժիշկ ՏՈՒՐՈՎԻԶ—12 1/2—1 Ժ. կանանց:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երե-
խային:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 Ժ. Սիֆիլիսի և մէզի ու
սեռական օրդիաններին:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 Ժ.
Ի. Ե. ՖԲԱՆՅՈՒՆ—7—7 1/2 ախանջի, կոկորդի
և ջրի ու ներքնային: Երկուշաբթի, չորեքշաբ-
թի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խորացուցական
հետազոտութիւններ է անում մէզի, խիւի, ա-
րեան, կաթի և այլն:

Վճար 50 Կ.: Համախորհրդի (Կոնսիլիումի) 7
օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը
ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԿ ՀԻՒՍՆԻՆԵՐԻ:
Հիւանդանոցի վերաբերումը:
Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ:

(№ 72)

ԳԵՐԶԱԿ ԱՐՇԱԿ ՄԱԼԻԵԱՆՑ

Նոր ստացած լինելով, ինչպէս Ռուսաստանի,
նոյնպէս և ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱՆ ԱՄԵՆ ՏՏԱԿ ԿԵ-
տորներ, ընդունում է պատուէրներ: Նոյնպէս
ծախում են կտորներ:

ՊԱՏՈՒԵՐՆԵՐԸ կատարվում են ամենայն ճշգու-
թեամբ:

Հասցէն. Գանձակայա փողոց, № 11:
(№ 33) 1—3

Մի պատուաւոր ԸՆՏԱՆԻՔ ուղւում է ու-
նենալ ՄԻ ՀԱՅՈՒՆԻ, աւարտած մեր հայ
գաղութներին մէկում, օրական երկու ժամ
խօսակցելու համար, ամսական 15 ռուբլի
վարձատրութեամբ:

Գիմը «Մշակի» խմբագրատուն, առաւօ-
տեան 12-ից մինչև 2 ժամը:
(№ 31) 2—6

Ցանկանալով ՍԱԶԻՐԵԹ վրացական գիւղի նո-
րաբաց դպրոցի համար հիմնել գրադարան, և ի
նկատի ունենալով դպրոցի սուղ միջոցները, սրանով
խոնարհաբար խնդրում եմ յարգելի հեղինակնե-
րին, թարգմանիչներին և առհասարակ բարեգործ
անձանց, օգնութիւն հասցնել գրադարանի հիմ-
նարկութեան՝ զգրելով: Ցանկացող նուիրատուները
իրանց նուէրները կարող են ուղարկել հետևեալ
հասցէով. Ս. Կիրիլի (Յ. Յ. Դ.), մեծ. Տաչքերի,
учителю Маркару Саатянцу.

Ուսուցիչ՝ Մարգար Սահակեանց:
(№ 32) 2—3

ՆԵՐԿԵՐ

ՄԱՁԻ ՀԱՄԱՐ

Վ. ԳԵՆԻ

Վիլնիայում

Իխիլից պատրաստած: Անվան գիւղեր
են մազն ու մօրուքը կարճ միջոցում
սե, շէկ և բաց ու մուգ շագանակա-
գոյն ներկերու համար: Մի սրուակի
գինը ճանապարհի ծախսով 3 ռուբլի է:

Վ. ԱՌԻՐԻԻ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՈՒՄ

Կօլոկոլնայա 18.

(№ 8. ամս. 20) 3—8

Վ. Ա. ՂԱՐՇԱՊԱՆՈՒՄ
ուր մշտապէս ապրում են երկու բժիշկ
ԴԵՂԱՏՈՒՆԸ
արվում է ԱՐԵՆԴՈՎ. Գիմը՝ Զրивань,
Акопьянцъ.

Վ. Ս. Գ. Ի. Մ. Շ. Ա. Կ. Ը.

Խ. ՄԱԼԻՈՒՄԵԱՆԻ

Գինն է 50 կօպէկ: Գիմը հեղինակին, կամ
կենդանական գրախնամանոցին, Թիֆլի-
սում:

Տեղեֆոն № 92.

Պահեստը կայարանի մօտ,
Ալեքսան փողոցի ծայրում:

ԿԵՐՈՍԻՆ ԳԵՐԱԶԱՆՑ ՅԱՏԿՈՒԹԵԱՆ

Այդ կերօսինը այրվում է առանց որ և է մուրի և հոտի, որ ստուգված է դոմայի դահլիճի
լուսաւորութեամբ ձայնաւորների նիստերի օրերը: Այդ կերօսինը կայ Թիֆլիսում բացառապէս այն
պահեստում, որ պատկանում է

„С В Ж Т З“ Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Պատրաստվում է նա առանձին պատուէրով Ի. Գ. ԳՐՈՒՆԶԻ Բագուի կերօսինեան գործա-
րանում, նրա գոյնը 1/2 մարկի է, այրվում է առանց որ և է հոտի և մուրի և ունի կատարելապէս
սպիտակ բոց. 10 ժամ այրվելու ընթացքում բոցը ընկնում է 0%: Գինը մէկ պուդի համար 1
րուբլի է, առանց ուղարկելու, ուղարկելով արժէ 1 ր. 10 կօպէկ: Խրաքանչիւր սպառող, ի հաս-
տատութիւն այն բանի, որ ապրանքը ընկերութեան պահեստին է դուրս եկել, անձամբ ստանում
է հաշիւը ընկերութեան կնիքով: Պատուէրները ընդունվում են ոչ պակաս 3 պուդից, տէլեֆոնով և
քաղաքային պատուով և կը կատարվին հետևեալ օրը: Կերօսինը ուղարկվում է բաղէրով «С В Ж Т З»
նախնային ընկերութեան բարձր յատկութեան կերօսին» վերնագրով: (№ 21) 9—10

Նոյեմբերի 1-ից կը ստացվի ՊԱՏԵՐԻ ՍԻՏԵՄՈՎ, ՊԱՏՐԱՍԱԾ ԲՈՒՍՍԱՅԻ ԲՈՒՌՈՒՄ
ՍՊԵՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն յայտնի է ամբողջ Կովկասում և Պարսկաստանում
իր յատկութիւններով և առաւ առատ բերքով: Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի
„Էկոնոմիստ“ ֆիրմայից: Գնել ցանկացողները կարող են դիմել ԵՂԲ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ-
ՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բագուում, Նուխում, Աղա-Մուսա և հմէքովին.
Այս հասցէով. Բр. Мнацаканянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ.
(Խ. 2.) 31—32

ԳԱՐԵՋՐԻ ՄԵԾ ՊԱՀԵԱՏ

ՐՈՍՏՈՎ—ԴՕՆԻ ՎՐԱ

„ЮЖНАЯ БАВАРИЯ“—ՀԱՐԱԻԱՅԻՆ ԲԱՎԱՐԻԱ

Գ Ա Ր Ե Զ Ր Ա Յ Ի Ն Շ Ո Գ Ե Շ Ա Ր Ժ Գ Ո Ր Մ Ա Ր Ա Ն Ի

Գտնվում է Վօլգայի շուսէի վրա

Կ Ա Ր Լ Ս Տ Ո Ւ Կ Ե Ն

ԱՌԵՏԻՐԱԿԱՆ ՏԱՆ ՊԱՀԵԱՏՈՒՄ

Արտահանվում է 1/20 վեդրօ պարունակող շիշերով . . . 3—
ՊԻԼԻՆԵԱՆ 3—
ՊԵԼԻՆԵԱՆ 1/40 3—80
Պատուէրներով դիմել Վօլգայի շուսէ փողոցը, կամ ՎԷԼԻԱՄԻՆՈՎԱՅԱ
փողոցի վրա գտնված գրասենեակը, տուն Չայեկոյովի, № 6.
(№ 23) (Խ. 5.) 8—10

Վ. Ա. Զ. Ա. Ռ. Վ. ՈՒՄ Ե Ն

1) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ, 2) ԴՐԻԳՈՐ ԱՐԴՐՈՒՆՈՒ, 3) ՐԱՖԻԻ, 4) ՊԱՏԿԱՆԵԱՆԻ 5)
ԱՌԱՄԵԱՆԻ

պատկերները մեծ առաքելիչ և վրա. բազմոցի (диванъ) լծակայ բարձրի, լըդ-
թախներ (портфель) և մոմակալի ծածկոցի համար:
Վաճառվում են պատրաստի մեծաքանակ լծակայները վերոյիշեալ պատկերներով:
Ցանկացողները պէտք է դիմեն ինձ այս հասցէով. Тифлисъ, Орбелиановская
ул., № 36, Александръ Родионовой. 6—7

Մ Ե Շ Վ. Ա. Զ. Ա. Ռ. ՈՒՄ Ե Ն

(Առանց սակարկութեան)

Եղբ. Գուլամպօլիների մեղադրւում և պահեստում, Գվօրցօյայա փողոցի վրա,
Կալուածական Բանկի տան մէջ և Սարաջիւի ու Ծովախօյի տան մէջ, յրաւում:
Չան ապաւան ապրանքներ և կանանց և երեխաների կատարի և յարդէ գլխարկ-
ներ 30 կօպէկից մինչև 1 ր., տղամարդկանց կատարի գլխարկներ 1 ր. 25 կօպէկից
սկսած և աւելի լծակայ, վրալներ 20 կօպէկով, կրօթիկներ, ժապաւէններ, ծաղիկ-
ներ, զգեստներ և գլխարկներ համար գուլամպօլ արշինը 20 կօպէկով և աւելի լծակայ,
անձրեակայներ, հոփանցներ և ձեռնոցներ 20 կօպէկից, Ժերսէ 1 ռուբլուց սկսած և
աւելի լծակայ: Եւ նոյնպէս մեծ ընտրութիւն մօղային և զարմատեղէնի ուրիշ ապրանք-
ներին էֆան գներով, որի մէջ պատուէր հասարակութիւնը կը համոզվի այցելելով մեր
վաճառումն:

(№ 12) Թարգմանքով ԵՂԲ. ԳՈՒԼԱՍՊՈՎՆԵՐ 21—30

„Ա. Մ. ՈՒՄ Ն. Ա. Կ. Ա. Ն. Խ. Դ. Ի. Ր. Ն. Ե. Ր.“
Աշխատութիւն ԱՐԻՍՏԱԿԵՍ ԵՊԻՍԿՈՓՈՍ ՍԵՐԻԱԿԱՆԻ:
Գինն է 1 ռուբլի: Ծախվում է Թիֆլիսում Կենտրոնական գրախնամանոցում և Յով-
հաննէս Տէր-Սարգսեանցի մեղադրւում: Գվօրցօյայա փողոցի վրա, Բագու . „Արօր“
տպարանում: (№ 6) 5—10

ԱՌԵՏԻՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նազօրնայա փողոց, № 9)

Ցանկացողը, ունենալ իրանց առետրական գործերի համար ուսման ընթացքը ա-
ւարտած աշակերտներ և աշակերտահներ, լծող բարեհաճն զիմել կուրսերի հիմնու-
ղին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առետրական
կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի
համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ:

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս Եղբ. Ծովախօյ-
ներին բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացի
զիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.
№ 88 12—20